ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ N 1 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ

ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ԲՈՒԺՔՈՒՅՐ

<<Հաստատում եմ>>

Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջի տնօրեն

_____ Պ.Սանթրոսյան

<<29>>08 2022 թ.

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Ուսումնական հաստատության բուժքույր կարող է աշխատել անձը՝ ով ունի առնվազն միջին մասնագիտական բժշկական կրթություն,գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

1.2 Բուժքույրը աշխատանքից ազատվում/նշանակվում է տնօրենի հրամանով:

1.3Պետք է իմանա սանիտարիայի, հիգիենայի հիմունքները, առաջին բուժ. օգնության նորմերը և կանոնները, լինի մարդասեր և գթասիրտ:

1.4Պետք է իմանա արտակարգ իրավիճակներում գործելու կանոնները

1.5 Իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ առողջապահության նախարարության որոշումներով, քոլեջի կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով, ՀՀ աշխատանքային օրենսգրքով, սույն պաշտոնի անձնագրով

2. Պաշտոնական պարտականությունները՝

2.1 Վերահսկում է բժշկական զննության ենթակա աշխատակիցների անձնական սանիտարական (բժշկական) գրքույկների ստացման, լրացման գործընթացը:

2.2 Վերահսկում է բժշկական զննության ենթակա ուսանողների անձնական սանիտարական (բժշկական) գրքույկների ստացման գործընթացը:

2.3 Քոլեջի տարածքում ապահովում է սանիտարական վիճակի վերահսկում:

2.4 Վարում է քրոնիկ հիվանդություն ունեցող ուսանողների և աշխատակիցների անհատական քարտեր:

2.5 Ապահովում է առաջին բուժ.օգնություն, անհրաժեշտության դեպքում ուղեկցում է է ուսանողին/ աշխատակցին բժշկական հաստատություն:

2.6 Պահանջագրերով դիմում է ղեկավարությանը անհրաժեշտ դեղերի , բժշկական գործիքների և սարքերի ձեռքբերման նպատակով:

2.7 Վարակիչ հիվանդությունների, համաճարակների հայտնաբերման, թունավորման, արտակարգ իրավիճակների պարագայում անհապաղ տեղեկացնում է տնօրենին:

2.8 ՈՒսանողների ծնողների հետ կապ է հաստատում, ստանում է տեղեկատվություն ուսանողների ախտորոշման առանձնահատկությունների վերաբերյալ :

2.9 Ուսանողների ծնողներից ճշտում է դեղորյաքի հանդեպ նրանց զգայությունը (եթե այդպիսիք կան)

2.10 Վիրուսային հիվանդությամբ ուսանողների բացահայտելու դեպքում մեկուսացնում է նրանց. ուսումնական աշխատանքների զծով տնօրենի տեղակալի միջոցով կապ է հաստատում ծնողների հետ և որոշում է կայացվում:

3. Իրավունքները `

Բուժքույրն իրավունք ունի.

3.1 Ծանոթանալ կազմակերպության ղեկավարության իր գործունեթյանն առնչվող որոշումների նախագծերի հետ:

3.2 Ղեկավարության քննարկմանը ներկայացնել առաջարկություն՝ սույն պաշտոնի անձնագրով նախատեսված պարտականությունների հետ կապված աշխատանքների կատարելագործման համար:

3.3 Կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից, մասնագետներից ստանալ տեղեկատվություն և փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են իր պաշտոնեական պարտականությունների կատարման համար:

3.4 Իր իրահավասության սահմաններում, իր նախաձեռնությամբ կամ կազմակերպության ղեկավարի թույլտվությամբ, կազմակերպության կառուցվածքային տարբեր ստորաբաժանումներից մասնագետներ ներգրավել իրեն հանձնարարված խնդիրների արդյունավետ լուծման նպատակով:

3.5 կազմակերպության ղեկավարությունից պահանջել աջակցություն՝ իր վրա դրված պաշտոնեական պարտականությունների և իրավունքների իրականացման հարցերով:

4. Պատասխանատվություն՝

Բուժքույրը պատասխանատու է՝

4.1 Քոլեջի բուժկետի նյութական արժեքների և դրանց անվտանգության համար:

4.2 Քոլեջում սովորողների առողջության համար:

4.3 Սույն պաշտոնի անձնագրով նախատեսված աշխատանքները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար

4.4Քոլեջի սանիտարական նորմերի պահպանմանը հետևելու, հայտնաբերելու և ապահովելու համար:

Աշխատող՝